

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՊԵՏՐՈՍ ԼԵՌՆԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Ֆինանսական արդյունքի հաշվառման և վերլուծության կատարելագործման ուղիները ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում**

Ը. 00.03 «Ֆինանսաներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան 2017**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Աշոտ Վարազդատի Մաթևոսյան**

Պաշտոնական ընդհանախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Աշոտ Հակոբի Բայադյան**  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Կարեն Վասիլի Ներսեսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի Դեկտեմբերի 21-ին ժամը .....-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Մ.Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. Նոյեմբերի 21-ին:

014 մասնագիտական խորհրդի  
Գիտական քարտուղար,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ս. Ա. Գևորգյան

## **Ատենախոսության ընդհանուր բնութագիրը**

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Տնտեսավարման ներկա պայմաններում, երբ գերիշխող է մասնավոր սեփականությունը, հույժ կարևորություն է ձեռք բերել տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական արդյունքը:

Ֆինանսական արդյունքի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվությամբ հետաքրքրված են ոչ միայն սեփականատերերը, այլև ներդրողները, գործընկերները, պետական մարմինները:

Երբ արտաքին տեղեկատվության հարցում շահառուների կողմից ներկայացվում են նոր պահանջներ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում ֆինանսական արդյունքի հաշվառման գործընթացի նկատմամբ, շուկայական հարաբերությունների զարգացմանը համահունչ շեշտադրվում է ֆինանսական հաշվետվությունների թափանցիկության և հավաստիության ապահովման բարձրացման հիմնախնդիրը:

Կազմակերպությունները իրենց ֆինանսական արդյունքը ապահովում են արդյունավետ կառավարման հաշվին, իսկ արդյունավետ կառավարման համար հիմք պետք է ծառայի ճշգրիտ վերլուծությունը, որը վեր կհանի կազմակերպությունում առկա բացերը, ուժեղ և թույլ կողմերը և ուշադրությունը կսևեռի հնարավոր վտանգների վրա: Այս իմաստով կարևորվում է ֆինանսական արդյունքի վերլուծության և բարձր որակավորմամբ ֆինանսական կառավարչի դերը:

Հաշվի առնելով ՀՀ ԵԱՏՄ անդամակցության իրողությունը՝ հրատապ է դառնում ֆինանսական արդյունքի հաշվառման գործընթացի ուսումնասիրությունը ԵԱՏՄ շրջանակում: Անհրաժեշտ է օգտագործել ԵԱՏՄ անդամակցության փաստը և փորձել առավելագույնս մեծ օգուտներ ստեղծել ՀՀ տնտեսության համար: Այս պարագայում արդեն հրատապ է դառնում ԵԱՏՄ շրջանակում օրենսդրափրավական կարգավորումների հնարավոր բարելավումները:

Ատենախոսը հարկ է համարում ֆինանսական արդյունքի հաշվառումը դիտարկել ֆինանսական արդյունքի հաշվառման, վերլուծության և պլանավորման ամբողջության մեջ, ինչպես նաև ֆինանսական հաշվառման համատեքստում դիտարկել նաև շահութահարկը՝ որպես այդ արդյունքը ձևավորող տարրերից մեկի, և գնահատել դրա ազդեցությունը ֆինանսական արդյունքի վրա:

Ֆինանսական արդյունքի առավել ամբողջական և համալիր վերլուծության նոր մոտեցումների մշակումը կլինի ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների կայուն զարգացմանը միտված անհրաժեշտ քայլերից մեկը: Ուստի, ֆինանսական արդյունքի հաշվառման և վերլուծության մեջ առկա խնդիրների ձևակերպումը և դրանց հնարավոր լուծումների առկայությունը պայմանավորել են ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է տեսական, օրենսդրափրավական նյութերի ուսումնասիրությամբ, համադրմամբ, արտերկրյա փորձի հետ համեմատմամբ և վերլուծությամբ վեր հանել ֆինանսական արդյունքի հաշվառման և վերլուծության խնդիրները, առաջարկել բարելաման ուղիներ և դիտարկել դրանց՝ ՀՀ տնտեսությունում ներդրման

նպատակահարմարության հարցը: Այս նպատակի իրականացմանն ուղղված՝ դրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ֆինանսական արդյունքի հաշվառման արտերկրյա ու հայրենական փորձը և պարզաբանել ֆինանսական արդյունքի հաշվառման օրենսդրաիրավական հիմքերը, համեմատականներ անցկացնել ՀՀ-ում ֆինանսական արդյունքի հաշվառման մոտեցումների և հարկման մեխանիզմների միջև:

- Պարզաբանել ֆինանսական արդյունքի վերլուծության տեսամեթոդաբանական հիմքերը և ներակայացնել ակտիվների իրացվելիության ու վճարունակության դերն այդ վերլուծությունում:

- Վերլուծել ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական արդյունքի և շահութահարկի՝ որպես այդ արդյունքի ձևավորման տարրերից մեկի փոխկապվածությունը, հիմնավորել հիմնական միջոցների մաշվածության մեթոդի և արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքների ազդեցությունը ֆինանսական արդյունքի ձևավորման վրա:

- Բացահայտել կազմակերպությունների վճարունակության և ակտիվների իրացվելիության բարելավման ուղիները ֆինանսական արդյունքի վերլուծության համատեքստում՝ ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի առաջատար կազմակերպությունների օրինակով:

- Պարզաբանել ֆինանսական արդյունքի հաշվառման բարելավման ուղիները Եվրասիական տնտեսական միության և առանձին՝ ՀՀ օրենսդրության շրջանակներում:

- Հիմնավորել հարկային հաշվառման տեսանկյունից կիրառվող մաշվածության մեթոդի խաթարող ազդեցությունը շահութահարկի՝ որպես ֆինանսական արդյունքի ձևավորման տարրի վրա:

- Մշակել և նորովի ներկայացնել դրամական հոսքերի կառավարման և վճարունակության մասին հաշվետվություն, որի շնորհիվ հնարավոր կլինի բարելավել ֆինանսական արդյունքը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններն են և դրանց կողմից ֆինանսական արդյունքի հաշվառմանն ու վերլուծության կիրառվող մեթոդաբանությունը:

Հետազոտության առարկան տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական արդյունքի հաշվառման, վերլուծության և դրանց բարելավման ուղիների ընտրությանն առնչվող հիմնահարցերն են:

**Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:** Հետազոտության համար հիմք են ծառայել հայ, ռուս և արտասահմանյան տնտեսագետ գիտնականների աշխատությունները՝ նվիրված ուսումնասիրվող թեմային, ՀՀ, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների և արտասահմանյան այլ երկրների օրենքները և այլ իրավական ակտերը, ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության, Պետական եկամուտների կոմիտեի հրապարակումները: Ուսումնասիրվել են տնտեսության իրական հատվածի տարբեր կազմակերպությունների վերաբերյալ տեսական, տեղեկատվական նյութեր և այդ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները:

Հետազոտության ընթացքում իրականացվել են համադրումներ, ցուցանիշների հաշվարկ, նորմատիվային սահմանների հետ համեմատություններ և վերլուծություններ: Կիրառվել են հաշվապահական հաշվառման և տնտեսավիճակագրական վերլուծության մեթոդներ:

**Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:**

Հետազոտության ընթացքում ապահովվել են այն արդյունքները, որոնք բխել են ատենախոսության խնդիրներից: Հիմնական արդյունքներով պայմանավորված՝ առաջարկվել են մի շարք նորույթներ, որոնք ունեն գործնական նշանակություն՝ իրական կյանքում կարող են ապահովել նշանակալի արդյունք: Աշխատանքում առաջարկված գիտական նորույթը հետևյալն է.

- ✓ Վեր են հանվել ֆինանսական արդյունքի հաշվառումը խեղաթյուրող մի շարք գործոններ և առաջարկվել են դրանց ազդեցության վերացման ուղիներ: Մասնավորապես՝ առաջարկվել է փոփոխել արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հարկվող շահույթում ներառման, մաշվածության փոփոխության մեթոդին և կապակցված կողմերին առնչվող առկա մոտեցումները՝ հստակ սահմանելով անցումային դրույթներ:
- ✓ Մշակվել է կազմակերպության վճարունակությանը և ակտիվների իրացվելիության սահմանային միջակայքերի որոշման մոտեցում՝ դրանք գնահատելով ֆինանսական արդյունքի հետ փոխկապվածության մեջ:
- ✓ Մշակվել և առաջարկվել է «Դրամական հոսքերի կառավարման և վճարունակության մասին» հաշվետվություն, որն ուղղված է դրամական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացման միջոցով ֆինանսական արդյունքի բարելավմանը. հաշվետվության արդյունքներից էլնելով՝ դիտարկվել են սցենարային լուծումներ:

**Հետազոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:**

Ատենախոսությունում ուսումնասիրված նյութը և կատարված վերլուծությունները ատենախոսին թույլ են տվել կատարել հետևություններ և եզրակացություններ, որոնք կարող են ունենալ գործնական նշանակություն ՀՀ օրենսդիր, գործադիր մարմիններ համար: Ատենախոսության գործնական նշանակությունը կարևորվում է հատկապես այժմ, երբ ՀՀ Հարկային օրենսգրքը հաստատված է, սակայն հողվածների ճնշող մեծամասնությունը ուժի մեջ կմտնեն 2018 թվականի հունվարի 1-ից և ձեռք բերված արդյունքները կարող են տեղ գտնել հարկային օրենսգրքում:

Ատենախոսությունում առաջարկված դրամական միջոցների կառավարման և վճարունակության մասին տիպային հաշվետվությունը ՀՀ իրական հատվածի տնտեսավարող սուբյեկտների մոտ կարող է գործնական կիրառություն գտնել:

**Ատենախոսության փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ «Ֆինանսական հաշվառում» և «Կառավարչական հաշվառում և աուդիտ» ամբիոնների համատեղ նիստում:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հրապարակումներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված

գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության հիմնական տեքստը շարադրված է տպագիր 142 էջերի վրա:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել են թեմայի արդիականությունը ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի հիմնական նպատակն ու խնդիրները, ստացված հիմնական տեսական ու գործնական արդյունքները, ինչպես նաև գիտական նորոյթն ու դրա գիտագործնական նշանկությունը, կիրառման հնարավորությունները:

**Արենախոսության առաջին՝ «Ֆինանսական արդյունքի հաշվառման և վերլուծության տեսամեթոդաբանական հիմքերը» գլխում** ուսումնասիրվել են հետևյալ խնդիրները.

1. Ֆինանսական արդյունքի տնտեսագիտական բովանդակությունը և հաշվառման մեխանիզմների համեմատական վերլուծությունը,

2. ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում ֆինանսական արդյունքի հաշվառման կիրառվող մեխանիզմի և հարկման օրենսդրաիրավական կարգավորման առանձնահատկությունները,

3. Ֆինանսական արդյունքի վերլուծության տեսամեթոդական մոտեցումները վճարունակության և ակտիվների իրացվելիության կապի համատեքստում:

**Ֆինանսական արդյունքի տնտեսագիտական բովանդակությունը և հաշվառման մեխանիզմների համամետական վերլուծության շրջանակում դիտարկվել են հետևյալը խնդիրները.**

1. Ծանոթանալ ֆինանսական արդյունքի էությանը՝ ուսումնասիրելով տարբեր տնտեսագետների կողմից ֆինանսական արդյունքին տրված սահմանումներին:

2. Ուսումնասիրել հաշվապահական հաշվառման առկա հինգ հիմնական մոդելները՝ այդ մոդելներից ուղղակի կախվածության մեջ դիտելով ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմը:

3. Դիտարկել ֆինանսական արդյունքի հաշվառման Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում կիրառվող մոտեցումները:

Ֆինանսական արդյունքի էությանը անդրադարձել են սկսած Լուկա Պաշուլից: Այդ շրջանում ֆինանսական արդյունքը արդեն հանդես է եկել որպես առևտրային գործունեության հիմնական նպատակ<sup>1</sup>:

Ադամ Սմիթը կարծում էր, որ աշխատողների ստեղծած արդյունքին ավելացվող արժեքը բաժանվում է երկու մասի. մի մասը ուղղվում է իրենց աշխատանքի վարձատրությանը, իսկ մյուսը՝ իրենց ձեռնարկատերերին՝ որպես շահույթ: Սմիթը շահույթը դիտարկում է որպես վարձու աշխատողների աշխատանքի արդյունքից ձեռնարկատիրոջ մասհանում <sup>2</sup>:

Իսկ ահա Դավիթ Ռիկարդոն սահմանել է հակադարձ կապը աշխատողների վարձատրության և շահույթի միջև. արդյունաբերության բոլոր ոլորտներում շահույթը նվազում է հումքի, նյութերի գների աճին զուգընթաց, եթե աճում է նաև աշխատավարձը: Միաժամանակ նշում է, որ շահույթի վրա անուղղակի կերպով ազդում են նաև այլ

<sup>1</sup> Пачоли Л. “Трактат о счетах и записях”, под ред. Соколова Я.В., “Финансы и статистика”, 2001, стр. 78

<sup>2</sup> Смит. А. Исследование о природе и причинах богатства народов, электронный источник: [http://royallib.com/book/smit\\_adam/issledovanie\\_o\\_prirode\\_i\\_prichinah\\_bogatstva\\_narodov.html](http://royallib.com/book/smit_adam/issledovanie_o_prirode_i_prichinah_bogatstva_narodov.html)

գործոններ<sup>3</sup>:

Ադամ Սմիթի և Դավիթ Ռիկարդոյի՝ շահույթի վերաբերյալ ունեցած մտքերը շարունակում է Կառլ Մարքսը, ով գտնում էր, որ շահույթի ձևավորման հիմնական աղբյուրը տնտեսության մեջ ներգրավված աշխատողների աշխատանքն է: Այդ աշխատանքը ստեղծում է հավելյալ արժեք, իսկ շահույթը հավելյալ արժեքի փոփոխված տարբերակն է<sup>4</sup>:

**Ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմները առաջին հերթին պայմանավորված են հաշվապահական հաշվառման վարման կոնկրետ մոդելով: Հաշվառման վարման համընդհանուր տարածված հինգ մոդելները հետևյալներն են.**

**Աղյուսակ 1**

**Հաշվապահական հաշվառման հիմնական մոդելներ<sup>5</sup>**

Հաշվապահական հաշվառման մոդել	Առանձնահատկությունները
Անգլո-ամերիկյան	Կողմնորոշված է ներդրողների, գործընկերների և բաժնետերերի հետաքրքրությունների բավարարմանը
Եվրոպական	Նկարագրվում է հաշվառման ոլորտում պետության կողմից մեծ դերակատարությամբ
Լատինամերիկյան	Պետական մարմինների պահանջներին համապատասխանեցվածություն
Միջազգային	Միտված է վերազգային կորպորացիաների և միջազգային արժույթային շուկայի մասնակիցների հետաքրքրություններին
Իսլամական	Կրոնական գաղափարախոսության գերակայություն

**Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցության իրողությունը՝ հեղինակի կարծիքով հրատապ է դառնում միության անդամ մյուս երկրներում ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմների ուսումնասիրությունը և համեմատական վերլուծության իրականացումը: Թե՛ Հայաստանի Հանրապետությունը, թե՛ Ռուսաստանի Դաշնությունը, թե՛ Ղազախստանի Հանրապետությունը, թե՛ Բելառուսի Հանրապետությունը և թե՛ Ղրղզստանի Հանրապետությունը կիրառում են հաշվառման եվրոպական մոդելը: Նշվածից հետևում է, որ թվարկված երկրներում պետությունը սահմանում է հաշվապահական հաշվառման վարման հստակ կանոններ և այստեղից էլ նախանշվում է, որ ԵԱՏՄ երկրներում հաշվառման սկզբունքները, մասնավորապես՝ ֆինանսական հաշվառման մեխանիզմները պետք է սկսել ուսումնասիրել օրենսդրաիրավական կարգավորման համատեքստում:**

ԵԱՏՄ անդամ երկրներում ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմը ներկայացնելուց հետո, ներկայացվել է նաև ՀՀ-ում ֆինանսական արդյունքի հաշվառման գործընթացը, մասնավորապես՝ ֆինանսական արդյունքի, եկամուտների, ծախսերի սահմանումները, դրանց՝ ֆինանսական հաշվետվություններում ճանաչման չափանիշները<sup>6</sup>:

**ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում ֆինանսական արդյունքի հաշվառման կիրառվող մեխանիզմը և հարկման օրենսդրաիրավական կարգավորման առանձնահատկությունները ենթահարցում հեղինակը դիտարկել է**

<sup>3</sup> Авадзе В.С. История экономических учений. (под ред. Проф. В.С.Авадзе, проф. А.С. Квасова.), Москва, ЮНИТИ-ДАНА, 2002, стр. 83.  
<sup>4</sup> История экономических учений, Под ред. В. Автономова, О. Ананьина, Н. Макашевой, Москва ИНФРА-М, 2002 стр. 177.  
<sup>5</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:  
<sup>6</sup> ՀՀ Կառավարության 235-Ն որոշման հավելվածի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հայեցակարգային հիմունքների 4-րդ գլուխ (ընդունված 11.03.2010թ.)



**հետևյալ 3 խնդիրները, որոնց ֆինանսական հաշվառման և հարկման առանձնահատկությունները հստակեցման կարիք ունեն.**

- Ներկայացվել է «Արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ի մոտեցումները՝ զուգահեռներ անցկացնելով ՀՀ ներկայիս օրենսդրության և Հարկային օրենսգրքի արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների՝ շահութահարկի հարկման օբյեկտում ներառվելու առանձնահատկությունների հետ:

- Դիտարկվել է «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի մոտեցումներով մաշվածության, մեկնաբանությունը, դրա հաշվարկման սկզբունքները՝ համեմատականներ անցկացնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով 2014 թ.-ի հունվարի 1-ից հետո ձեռք բերված (կառուցված, մշակված) հիմնական միջոցների համար կիրառվող մաշվածության մեթոդի մոտեցումների հետ:

- Ներկայացվել է «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24-ի պահանջները, կապակցված կողմերի ճանաչման, դրանց մասին տեղեկության բացահայտման մոտեցումները, զուգահեռներ են անց կացվել ՀՀ Հարկային օրենսգրքի 30՝ փոխկապակցված կազմակերպություններ և (կամ) ֆիզիկական անձինք հոդվածի պահանջների միջև:

**Ֆինանսական արդյունքի վերլուծության տեսամեթոդաբանական մոտեցումները վճարունակության և ակտիվների իրացվելիության կապի համատեքստում դիտարկելու համար հետազոտությունում դիտարկվել են հետևյալ խնդիրները.**

1. Ներկայացնել ֆինանսական արդյունքի վերլուծության նպատակը, խնդիրները,
2. Ձևակերպել ֆինանսական արդյունքի վերլուծության ժամանակ օգտագործվող տեղեկատվական աղբյուրները,
3. Ուսումնասիրել ֆինանսական արդյունքի վերլուծության առկա մոտեցումները հայ և արտասահմանյան հեղինակների աշխատանքներում,
4. Դիտարկել կազմակերպության վճարունակությունը և ակտիվների իրացվելիությունը ֆինանսական արդյունքի բարելավման և ընդհանուր ֆինանսական վերլուծության մեջ նրա դերի համատեքստում:

**Արենախոսության երկրորդ՝ «ՀՀ արենախոսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական արդյունքի հաշվառման և վերլուծության լուծում պահանջող հիմնախնդիրները» գլխում հեղինակը դիտարկել է հետևյալ հարցերը.**

1. Ֆինանսական արդյունքի համեմատական վերլուծությունը և դրա հարկման գնահատականը ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում,

2. Ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմում մաշվածության մեթոդի և արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքների ազդեցության գնահատման մոտեցումը,

3. Կազմակերպությունների վճարունակության և հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը՝ ֆինանսական արդյունքի վերահսկողության համատեքստում:

**«Ֆինանսական արդյունքի համեմատական վերլուծությունը և դրա հարկման գնահատականը ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում» ենթահարցում կատարվել է հետևյալը.**

Ուսումնասիրվել է արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքները հարկվող շահույթում ներառելու արտերկրյա փորձը ԵԱՏՄ անդամ երկրների և Արևելյան գործընկերության շրջանակում, որի արդյունքում պարզ է դարձել, որ Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսի, Ղրղզստանի Հանրապետությունում, Ղազախստանի

Հանրապետությունում, Ուկրաինայում, Վրաստանում և Մոլդովայի Հանրապետությունում արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքները ներառվում են շահութահարկի հարկման բազայում<sup>7</sup>:

«Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի պահանջների ուսումնասիրությունը մաշվածության հարցում հեղինակին տանում է այն մտքին, որ հիմնական միջոցի յուրաքանչյուր միավոր, որի արժեքը նշանակալի է և կարող է ունենալ մաշվածության հաշվարկման այլ մեթոդաբանություն կամ օգտակար ծառայության այլ ժամկետ, պետք է մաշվածության ենթարկվի առանձին<sup>8</sup>: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ շահութահարկի առումով կիրառվող մաշվածության մեթոդը ենթադրում է ոչ թե հիմնական միջոցների առանձին միավորների մաշվածության հաշվարկ, այլ ընդհակառակը՝ միավորում է տարաբնույթ և տարբեր նպատակային նշանակության հիմնական միջոցներ մեկ ընդհանուր խմբում և կիրառում միևնույն տոկոսադրույքը որչ խմբի համար<sup>9</sup>:

«Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24-ում հստակ է դիրքորոշումը, որ կազմակերպությունների միջև իրականացված գործարքների ծավալը չի կարող հիմք հանդիսանալ կապակցված կողմ որակվելու համար, այնտեղ կապակցվածության որոշման համար առավել շեշտված է միմյանց որոշումների վրա ազդեցության հանգամանքը, որն էլ իր հերթին կարող է ազդել կազմակերպության ֆինանսական արդյունքի վրա<sup>10</sup>: Եվ հենց այդ ազդեցությունը հաշվի առնելով՝ ՀՀՄՍ 24-ը պարզաբանում է բոլոր այն դեպքերը, երբ անհրաժեշտ է լինում ֆինանսական հաշվետվությունները օգտագործողների համար բացահայտել կապակցված կողմերին<sup>11</sup>:

Հեղինակը իրականացրել է ՀՀ տնտեսության իրական հատվածի 311 կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների, մասնավորապես՝ եկամուտների և ծախսերի կազմի ու կառուցվածքի վերլուծություն, շահութահարկի փոփոխությունը դիտարկվել է հարկումից առաջ և հարկումից հետո շահույթի փոփոխության համատեքստում: Վերլուծությունը ներկայացված է ստորև՝ աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզ է դարձել, որ ՀՀ տնտեսության իրական հատվածի 311 կազմակերպությունների համախառն եկամուտները 2016 թ.-ին 2015թ.-ի համեմատ ավելացել են 117,9 մլրդ. դրամով, կամ՝ 4.6 տոկոսով, իսկ ծախսերը ավելացել են 47,7 մլրդ. դրամով, կամ՝ 1.93 տոկոսով: Փաստը, որ համախառն եկամտի աճի տեմպը գերազանցում է ծախսերի աճի տեմպին, դրական է գնահատվում: Մինչև հարկումը շահույթը 2016 թ.-ին 2015թ.-ի համեմատ ավելացել է 40,2 մլրդ. դրամով, կամ աճել է 42.68 տոկոսով, իսկ հարկումից հետո շահույթը ավելացել է 36,3 մլրդ. դրամով կամ աճել է 73.83 տոկոսով: 2016 թ.-ի շահութահարկը 2015թ.-ի համեմատ պակասել է 39.95 մլրդ. դրամով, կամ նվազել է 8.87 տոկոսով: Առաջին հայացքից տարօրինակ է այն երևույթը, որ մինչև հարկումը շահույթը ավելացել է, բայց շահութահարկի պարտավորությունը նվազել է: Այս երևույթը կարելի է բացատրել հարկվող շահույթի հաշվառման առանձնահատկություններով, մասնավորապես՝ եկամուտներով և ծախսերով, որոնք ընդունելի չեն կամ մասամբ են ընդունելի հարկվող շահույթում, ինչպես նաև հարկային առումով եկամուտների և ծախսերի հաշվառման առանձնահատկություններով, որոնք

<sup>7</sup> Վերլուծությունը մանրամասն ներկայացված է ատենախոսությունում:

<sup>8</sup> ՀՀՄՍ 16՝ «Հիմնական միջոցներ», հաստատված՝ «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 235-Ն որոշում, ընդունված 11.03.2010թ.

<sup>9</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք ՀՕ 155, հոդված 12.1, ընդունված 30.09.1997

<sup>10</sup> ՀՀՄՍ 24՝ «Կապակցված կողմերի բացահայտումներ», հաստատված՝ «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 235-Ն որոշում, ընդունված 11.03.2010թ.

<sup>11</sup> Լույսը, տե՛ս 10 ծանոթագրությունը:

կիրառելի են միայն շահութահարկի հաշվարկման ժամանակ: Այդպիսի եկամուտներ և ծախսեր, որոնց պատճառով առաջանում է նման խեղաթյուրումներ ներկայացվել են վերևում:

**Աղյուսակ 2**


**«Ն տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշներ 2015-2016թթ.»<sup>12</sup>**

Հ/հ	Տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշները	2015 թվական		2016 թվական		2016 թ.-ի և 2015թ.-ի տարբերությունը	
		Գումար հազ. Դրամ	Ցուցանիշում ներառված տնտեսվարող սուբյեկտների թանակը	Գումար հազ. Դրամ	Ցուցանիշում ներառված տնտեսվարող սուբյեկտների թանակը	Գումար հազ. Դրամ	Ցուցանիշում ներառված տնտեսվարող սուբյեկտների թանակը
1	Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հաստյթ (առանց ԱԱՀ և ակցիզային հարկի)	2,456,614,785	311	2,545,339,272	311	88,724,487	0
2	Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների հնքնադեբ	1,995,177,928	303	2,041,948,121	304	46,770,193	1
3	<b>Համախառն շահույթ (1-2)</b>	<b>461,436,857</b>	-	<b>503,391,151</b>	-	<b>41,954,294</b>	-
4.1	Գործառնական այլ եկամուտներ	128,265,627	258	157,757,369	261	29,491,742	3
4.2	Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ	357,685	2	6,567	1	-351,118	-1
4	<b>Ընդամենը գործառնական եկամուտներ (4.1+4.2)</b>	<b>128,623,312</b>	-	<b>157,763,936</b>	-	<b>29,140,624</b>	-
5.1	Իրացման ծախսեր	117,006,361	243	125,837,180	251	8,830,819	8
5.2	Վարչական ծախսեր	171,061,516	302	179,667,344	302	8,605,828	0
5.3	Գործառնական այլ ծախսեր	187,704,559	262	171,152,673	261	-16,551,886	-1
5.4	Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր	226,591	2	238,702	2	12,111	0
5	<b>Ընդամենը գործառնական ծախսեր (5.1+5.2+5.3+5.4)</b>	<b>475,999,027</b>	-	<b>476,895,899</b>	-	<b>896,872</b>	-
6	<b>Իրացումից շահույթ (վնաս) (3+4-5)</b>	<b>114,061,142</b>	-	<b>184,259,188</b>	-	<b>70,198,046</b>	-
7.1	Շարունակվող գործունեության շահույթ	57,122,828	27	12,318,934	26	-44,803,894	-1
7.2	Շարունակվող գործունեության վնաս	76,910,574	64	64,821,268	64	-12,089,306	0
7.3	Ընդամենը գործունեությունից շահույթ	379,066	2	434,982	3	55,916	1
7.4	Ընդամենը գործունեությունից վնաս	80,317	3	98,604	3	18,287	0
7.5	Վերադասակարգման ճշգրտումներ. օգուտներ,	647,427	3	2,913,291	10	2,265,864	7
7.6	Վերադասակարգման ճշգրտումներ. կորուստներ	1,086,339	16	696,571	9	-389,768	-7
7	<b>Ընդամենը ֆինանսական արդյունքին վերագրվող այլ շահույթ (վնաս) (7.1-7.2+7.3+7.4+7.5+7.6)</b>	<b>-19,927,909</b>	-	<b>-49,949,236</b>	-	<b>-30,021,327</b>	-
8.1	Մինչև հարկումը շահույթ	246,173,019	244	247,385,120	254	1,212,101	10
8.2	Մինչև հարկումը վնասը	152,039,786	67	113,075,168	57	-38,964,618	-10
8	<b>Ընդամենը մինչև հարկումը շահույթ (վնաս) (8.1-8.2 կամ 6+7)</b>	<b>94,133,233</b>	<b>311</b>	<b>134,309,952</b>	<b>311</b>	<b>40,176,719</b>	<b>0</b>
9.1	Շահութահարկի գծով ծախս	48,017,246	295	45,647,843	297	-2,369,403	2
9.2	Շահութահարկի գծով եկամուտ (փոխհատուցում)	2,987,774	16	4,613,539	14	1,625,765	-2
9	<b>Ընդամենը շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) (9.1-9.2)</b>	<b>45,029,472</b>	<b>311</b>	<b>41,034,304</b>	<b>311</b>	<b>-3,995,168</b>	
10.1	Ընդամենը հարկումից հետո շահույթ	206,238,039	235	210,196,336	251	3,958,297	18
10.2	Ընդամենը հարկումից հետո վնաս	157,134,278	76	116,920,688	60	-40213588	-18
10	<b>Ընդամենը հարկումից հետո շահույթ (վնաս) (10.1-10.2 կամ 8-9)</b>	<b>49,103,761</b>	<b>311</b>	<b>93,275,648</b>	<b>311</b>	<b>36,255,291</b>	<b>0</b>

<sup>12</sup> Աղյուսակը կազմվել է ՀՀ ԱԿԾ ֆինանսների վիճակագրության բաժնի կողմից էլեկտրոնային տրամադրված տնտեսության իրական հատվածի 311 կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերլուծության արդյունքում

Աղյուսակ 2-ի տվյալներից հետաքրքրական է հատկապես այն, որ մինչև հարկումը 2015 թվականին 244 տնտեսվարող սուբյեկտ շահույթ է ունեցել, իսկ հարկումից հետո դրանց թիվը նվազել է 235-ի, իսկ 2016 թվականին մինչև հարկումը շահույթ է ունեցել 254 տնտեսվարող սուբյեկտ, իսկ հարկումից հետո՝ 251-ը: Այս փաստերը, հեղինակի կարծիքով վկայում են այն մասին, որ շահութահարկը կազմակերպության շահույթից անկախ մեծությամբ է, ինչը ենթադրվում է, որ պետք է այդպես չլիներ՝ հաշվի առնելով, որ շահութահարկը կազմակերպության արդյունքներից պետության մասնաբաժինն է: Ստացվում է այնպես, որ կան կազմակերպություններ, որոնք արդյունք չեն ապահովել, բայց տվել են պետության մասնաբաժինը և կան այնպիսիք, որոնք արդյունք ապահովել են, բայց շահութահարկի գծով փոխհատուցում են ունեցել:

Հիմք ընդունելով ստացված արդյունքը՝ կատարվել են հավելյալ վերլուծություններ, ինչը հնարավորություն է ընձեռել պարզելու՝ ինչպիսի կոռեկցիոն կապվածություն կա շահութահարկի և հարկվող շահույթի միջև: Այդ նպատակով համեմատվել են մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը ստացած շահույթի (վնասի) ու բյուջե մուտքագրված շահութահարկի ցուցանիշները թե՛ ընդհանուր տնտեսության, թե՛ առանձին տնտեսվարող սուբյեկտի մակարդակներում: Ընդհանուր տնտեսության մակարդակում վերոնշյալ երկու ցուցանիշների միջև կոռեկցիայի գործակիցը 0.72 է, իսկ «Մաքուր երկաթի Գործարան» ԲԲԸ-ի տվյալներով՝ 0.78: «Մաքուր երկաթի Գործարան» ԲԲԸ-ի մինչև հարկումը շահույթի և շահութահարկի ցուցանիշները ներակայացված է ստորև՝ գծապատկերի տեսքով.



**Գծապատկեր 1. «Մաքուր երկաթի Գործարան» ԲԲԸ-ի մինչև և հարկումը շահույթը և շահութահարկը 2009-2015թթ. (հազ. դրամ)<sup>13</sup>**

Գծապատկերից ակնհայտ է դառնում, որ շահույթի կորի տատանումների կողքին շահութահարկի կորը բավականին կայուն է մնում, միաժամանակ այդ երկու ցուցանիշների միջև կոռեկցիայի գործակիցը 0.72 է: Այս վերլուծությունը կատարվել է նաև առանձին տնտեսվարող սուբյեկտի համար. պատկերը էապես չի տարբերվում ընդհանուր տնտեսությունում առկա իրավիճակից:

**Ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմում մաշվածության մեթոդի և արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ազդեցության գնահատման ժամանակ ուսումնասիրվել են «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության ֆինանսական արդյունքը, արտարժույթի փոխարժեքային տարբերությունների գծով ծախսերը և եկամուտները, ինչպես նաև հիմնական միջոցների մաշվածության ծախսերը և փորձ է կատարվել բացահայտել որոշակի օրինաչափություններ:**

<sup>13</sup> Գծապատկերը կազմվել է ատենախոսության 2.1 ենթահարցում իրականացրած վերլուծության հիման վրա

«ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության տվյալներից պարզ է դառնում, որ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում 161.26 մլն դրամ արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտները և 382.76 մլն. դրամ արտարժույթի փոխարժեքային տարբերության ծախսը, օրենքի համաձայն, հաշվի չեն առնվել շահութահարկը որոշելիս՝ դրա ողջ հետևանքը թողնելով ընկերության վրա:

Աղյուսակ 3-ում դիտարկվել է նաև այսպիսի մի իրավիճակ, երբ արտարժույթի փոխարժեքային տարբերությունները հաշվի են առնվում շահութահարկը որոշելիս: Ուսումնասիրելով թիվ 3 աղյուսակը՝ երևում է, որ շահութահարկի դրույքաչափը 2010-2013թթ. մեծ չափով մոտենում է իր գործող դրույքաչափին՝ մեղմելով փաստացի հաշվարկված տեսակարար կշիռներում ի հայտ եկած տարբերությունները, սակայն 2014 թվականից սկսած՝ այդ տարբերությունը ավելի է սրվում: Վերջին երկու տարում առաջացած խնդրի պատճառը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված մաշվածության մեթոդն է, որը պետք է կիրառվեր 2014 թվականից հետո ձեռք բերված հիմնական միջոցների համար:

### Աղյուսակ 3

#### «Ապառաժ Մայնինգ» ՍՊԸ ֆինանսական ցուցանիշները 2010-2016թթ.<sup>14</sup>


Ցուցանիշ/Տարեթիվ	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ, մլն. դրամ	7.3	4.5	15.9	9.6	83.4	24.17	16.39
2. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից ծախսեր, մլն. դրամ	10.03	17.8	70.06	12.39	210.55	46.43	15.50
3. Հիմնական միջոցների մաշվածության ծախս (հարկային մոտեցմամբ), մլն. դրամ	23.85	131.54	224.49	252.11	298.48	490.94	342.21
4. Շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցնելը, մլն. դրամ	212.42	345.63	554.52	956.37	819.82	639.9	411.51
5. Շահութահարկ, մլն. դրամ	43.5	73.22	122.86	200.05	150.9	63.87	50.76
6. Շահութահարկի տես. կշիռը նախքան հարկումը շահույթի կազմում, %	20.48	21.18	22.16	20.92	18.41	9.98	12.34
7. Շահութահարկի տես. կշիռը նախքան հարկումը շահույթի կազմում (հաշվի առնելով արտարժույթի փոխարժեքային տարբերությունները շահութահարկը հաշվարկելիս) %	20.22	20.41	20.20	20.86	15.30	9.29	12.38

Կազմակերպությունների վճարունակության և ակտիվների իրացվելիության վերլուծությունը՝ ֆինանսական արդյունքի վերահսկողության համատեքստում դիտարկելիս հաշվարկվել է ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի 11 կազմակերպությունների («Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ, «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ, «Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ, «Ապառաժ Մայնինգ» ՍՊԸ, «Վանդ-ՍԱ» ՍՊԸ, «Մաքուր Երկաթի գործարան» ԲԲԸ, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ, «Մեղրածոր Գոլդ» ՍՊԸ, «Գեուպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ) իրացվելիությունը և վճարունակությունը բնութագրող ցուցանիշները: Ընդհանուր առմամբ, արձանագրվել է, որ դիտարկված 11 կազմակերպությունների մեծ մասում առկա է իրացվելիության և վճարունակության խնդիր:


Իրացվելիության և վճարունակության խնդիրը ատենախոսը քննարկել է ֆինանսական արդյունքի բարելավման համատեքստում: «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ

<sup>14</sup> Աղյուսակը կազմվել է «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկության հիման վրա

ընկերության ցուցանիշներով փոքրագույն քառակուսիների մեթոդով որոշվել է կազմակերպության համար իրացվելիության և վճարունակության օպտիմալ փոխհարաբերակցությունը՝ ըստ արդյունքային ցուցանիշի: Ստացված արդյունքները ներկայացված են թիվ 2 և 3 գծապատկերներում:



**Գծապատկեր 2. «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի դասակարգման արդյունքները՝ ըստ  $Y_z$  ռեգրեսիոն հավասարման<sup>15</sup>**



**Գծապատկեր 3. «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի դասակարգման արդյունքները՝ ըստ  $Y_z$  ռեգրեսիոն հավասարման<sup>16</sup>**

**Արենախոսության երրորդ՝ «Ֆինանսական արդյունքի հաշվառման և վերահսկողության կապարելագործման ուղիները» գլխում** ներկայացվել են ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմի բարելավման ուղիները ԵԱՏՄ և ՀՀ օրենսդրությունների կապի համատեքստում, ինչպես նաև հարկային հաշվառման համատեքստում գնահատվել է շահութահարկի վրա մաշվածության մեթոդի ազդեցությունը: Առանձին ենթահարցով առաջարկվել է ֆինանսական արդյունքի վերլուծության և վերահսկողության կատարելագործման մոտեցում:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի և ԵԱՏՄ անդամ երկրների ֆինանսական արդյունքի հաշվառման մոտեցումների ուսումնասիրությունը հեղինակին հանգեցրել է այն մտքին, որ առաջնային նշանակություն է ձեռք բերում միության անդամ երկրների կողմից հաշվապահական հաշվառմանը ներկայացվող պահանջների՝ հատկապես հաշվապահական հաշվառման ստանդարտների ներդաշնակեցումը:

**Միության անդամ երկրներում հաշվապահական հաշվառման միասնական մոտեցումներով իրականացումը միտված է լուծելու մի շարք խնդիրներ, որոնցից**

<sup>15</sup> Գծապատկերը կազմվել է ատենախոսության 2.3 ենթահարցում իրականացված ռեգրեսիոն վերլուծության հիման վրա

<sup>16</sup> Գծապատկերը կազմվել է ատենախոսության 2.3 ենթահարցում իրականացված ռեգրեսիոն վերլուծության հիման վրա

**ամենակարևորը տեղեկտվության համադրելիությունն է, ինչի շնորհիվ էլ հնարավոր կլինի ներդրումների համար բարենպաստ միջավայր ստեղծել և խուսափել փոխադարձ հաշվարկներում հնարավոր բարդություններից:**

ԵԱՏՄ շրջանակում հաշվապահական հաշվառման միասնական մոտեցումների որդեգրումը ատենախոսի կարծիքով հնարավոր է իրականացնել երկու մոտեցմամբ.

**Առաջինը՝** Եվրասիական տնտեսական միության անդամ երկրները պետք է մշակեն հաշվապահական հաշվառման սեփական ստանդարտները:

**Երկրորդ** մոտեցման դեպքում Եվրասիական տնտեսական միության անդամ բոլոր պետություններն էլ ընդունում են Ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտները՝ որպես պարտադիր կիրառության համար:

**Ֆինանսական արդյունքի հաշվառումը ՀՀ օրենսդրության համատեքստում դիտարկելիս** արտարժույթի փոխարժեքային տարբերությունների հաշվառման մեխանիզմները ատենախոսի կողմից ներկայացվել են թե՛ ստանդարտների տեսանկյունից, թե՛ շահութահարկի հաշվարկման համար կիրառվող մոտեցման տեսանկյունից: Ներկայացվել է «Արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ի մոտեցմամբ հաշվետու տարվա շահույթ (վնասում) ներառվող օգուտները և վնասները: Վեր է հանվել այն խնդիրը, որ արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքները հարկվող շահույթում չներառելով՝ խախտվում է հարկման բազայի որոշման օբյեկտիվությունը, այսինքն՝ վերագնահատումներից առաջացող օգուտների կամ վնասների ողջ ռիսկը կրում է տնտեսվարող սուբյեկտը՝ առանց դրանցում պետության մասնակցության: Եթե շահութահարկի տրամաբանությունը, նրա էությունը տնտեսվարող սուբյեկտների գործունեության արդյունքում ստացած շահույթից պետությանը մասնաբաժին հատկացնելն է, ապա վերագնահատումներից օգուտները և վնասները այդ շահույթում չհաշվառելը ոչ օբյեկտիվ է դառնում, քանի որ այս պարագայում ստացվում է, որ այն եկամուտները և ծախսերը, որոնք իրենցով պակաս ռիսկային են, պետությունը հարկում է, իսկ բարձր ռիսկայնություն ունեցողների ողջ ռիսկը թողնվում է տնտեսվարողների վրա:

Հիմնվելով վերոնշյալի և իրականացված վերլուծությունների արդյունքների վրա՝ ատենախոսը առաջարկել է փոփոխություն կատարել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ Հարկային օրենսգրքում և արտարժույթի փոխարժեքային տարբերության հետևանքով առաջացած ծախսերը և եկամուտները ներառել շահութահարկի հարկման օբյեկտում:

Փոփոխության իրականացման համար առաջարկվել է լուծման հնարավոր երկու մոտեցում, ինչպես նաև անցումային դրույթներ.

ՀՀՄՍ 24-ում կապակցված են դիտվում միմյանց որոշումների կայացման վրա ազդեցություն ունեցող կողմերը և պահանջվում է բացահայտումներ կատարել դրանց վերաբերյալ<sup>17</sup>: Միմյանց որոշումների վրա ազդեցությամբ էլ ենթադրվում է, որ կապակցված կողմերը ազդեցություն ունեն նաև ֆինանսական արդյունքի վրա, այդ պատճառով էլ անհրաժեշտ է լինում բացահայտել այդպիսի կողմերի վերաբերյալ տեղեկությունները<sup>18</sup>: Միաժամանակ պարզ էր դարձել, որ միմյանց միջև տեղի ունեցող

<sup>17</sup> ՀՀՄՍ 24՝ «Կապակցված կողմերի բացահայտումներ», հաստատված՝ «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 235-Ն որոշում, ընդունված 11.03.2010թ.

<sup>18</sup> Նույնը, տե՛ս 17 ծանոթագրությունը:

գործարքների պարբերականությունը ՀՀՄՍ 24-ի պահանջներով չի կարող դիտվել կապակցվածության հիմք՝ ի տարբերություն ՀՀ Հարկային օրենսգրքի:

Չնայած նրան, որ ՀՀ Հարկային օրենսգրքում փոխկապակցված կողմերը ամրագրվել են այլ տրամաբանությամբ ՀՀՄՍ 24-ի համեմատ, այնուամենայնիվ ՀՀ Հարկային օրենսգրքում չկա որևէ բացառություն փոխկապակցված կողմերի համար: Ավելին՝ ՀՀ Հարկային օրենսգրքում ամրագրված «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքը, ինչպես նաև 71-րդ և 73-րդ գլուխները ևս հավասարության նշան են դնում բոլոր սուբյեկտների միջև՝ անկախ փոխկապակցվածությունից: Սակայն, չնայած նրան, որ հարկային օրենսգրքի 71-րդ և 73-րդ գլուխների կարգավորումները կարող են որոշ չարաշահումներ կանխել (խոսքը գնում է հատկապես ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հետ կատարված գործարքներին, որոնց միջոցով հնարավոր է հարկվող գործարքների ՀՀ-ից արտահոսք), ահնրաժեշտ էր սահմանել բացառություններ ՀՀ ռեզիդենտ փոխկապակցված կազմակերպությունների միջև գործարքներում:

Ատենախոսության 3.2 ենթահարցում դիտարկվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված 2014թ.-ի հունվարի 1-ից հետո ձեռքբերված ոչ ընթացիկ ակտիվների համար կիրառվող մաշվածության մեթոդի հետևանքով առաջացած խնդիրները: Հանգել է նրան, որ մաշվածության հաշվարկման վերոնշյալ մեթոդը աննպատակահարմար է կիրառության համար, միաժամանակ փաստելով, որ նշված մեթոդը փոխվել է Հարկային օրենսգրքով, սակայն, հաշվի առնելով, որ պատշաճ կերպով ներկայացված չեն անցումային դրույթները, հեղինակը առաջարկել է անցումային դրույթներ: Մաշվածության մեթոդի փոփոխման ժամանակ յուրաքանչյուր խմբում առկա հիմնական միջոցների սկզբնական արժեքները հանրագումարի բերվեն, այնուհետև որոշվի յուրաքանչյուր հիմնական միջոցի տեսակարար կշիռը սկզբնական արժեքների հանրագումարում, ստացված տեսակարար կշիռները ընդունվեն որպես բաշխման հիմք՝ խմբի հաշվեկշռային (մնացորդային) արժեքները ըստ առանձին հիմնական միջոցների բաշխելու ժամանակ: Այս գործողություններից հետո յուրաքանչյուր հիմնական միջոց կունենա իր հաշվեկշռային (մնացորդային) արժեքը, որի հիման վրա էլ կսկսվի հաշվարկվել մաշվածություն գծային մեթոդը:

Ատենախոսության 3.3 ենթահարցում մշակվել և առաջարկել է դրամական հոսքերի կառավարման և վճարունակության մասին հաշվետվության տիպային ձև, ներկայացվել է դրա լրացման կարգը, պարզեցված տարբերակում դիտարկվել են մասնավոր դեպքեր: Հաշվետվության տեղեկատվական բնույթի շնորհիվ ապահովվում է կազմակերպության ֆինանսական կառավարչին անհրաժեշտ տեղեկատվություն, այն գնահատողական է, հնարավորություն է տալիս ներկայացված տեղեկատվության հիման վրա կայացնել որոշումներ և իրականացնել դրամական հոսքերի պլանավորում:

**Եզրակացություններ բաժնում ամփոփվել և ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները և առաջարկությունները:**

Եզրակացություններ բաժնում ատենախոսը ամփոփել է հետազոտությունը՝ ելնելով ստացված արդյունքներից: Յուրաքանչյուր արդյունքի մասով ներկայացվել է հետազոտության տեսական, օրենսդրաիրավական նյութերի ուսումնասիրության ամփոփումները, պարզաբանվել են խնդիրներ և ներկայացվել առաջարկներ. հետազոտության եզրակացություններ բաժնում հեղինակը հիմնականում հանգում է հետևյալին.

1. Հետազոտության շրջանակում դիտարկված առաջին խնդիրը վերաբերում է ՀՀ



և ԵԱՏՄ անդամ երկրների ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմին, որի շրջանակում ստացվել են հետևյալ արդյունքները.

✓ ԵԱՏՄ անդամ երկրների ֆինանսական արդյունքի հաշվառման մեխանիզմի ուսումնասիրությունից ելնելով՝ առաջարկվել է կամ ԵԱՏՄ շրջանակում մշակել հաշվապահական հաշվառման ստանդարտներ՝ հիմքում ունենալով Ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտները, կամ ԵԱՏՄ անդամ երկրների կողմից ընդունվեն Ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտները՝ որպես պարտադիր կիրառության համար պայման:

✓ Նշված գաղափարի կյանքի կոչվումը կտանի տեղեկատվության համադրելիության, ինչի շնորհիվ հնարավոր կլինի համեմատականներ անցկացնել տարբեր երկրների տնտեսությունների միևնույն ճյուղում գործող կազմակերպությունների միջև, ինչպես նաև խուսափել փոխադարձ հաշվարկների ժամանակ հնարավոր բարդություններից:

2. Ատենախոսության շրջանակում դիտարկված երկրորդ խնդիրը վերաբերում է արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքներին և այդ շրջանակում իրականացված հետազոտությունը ամփոփված է հետևյալ դրույթներում.

✓ Հետազոտությունում ամփոփելով նշված ուղղությամբ կատարված ուսումնասիրությունը և վերլուծությունը՝ առաջարկվել է շահութահարկի հարկման բազայում ներառել արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտները և վնասները՝ դրա հիմքում առաջինը ունենալով հարկման բազայի ձևավորման օբյեկտիվությունը, ինչը նաև ՀՀ Հարկային օրենսգրքի նպատակներից է:

✓ Առաջարկվել է արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտների՝ հարկվող շահույթում ներառման երկու հնարավոր տարբերակ.

Առաջին դեպքում արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտները ներառվում են շահութահարկի հարկման առումով համախառն եկամուտում, իսկ վնասները՝ նվազեցվող ծախսերում, ինչպես դա կատարվում է Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսի, Մոլդովայի Հանրապետություններում, Ուկրաինայում, Վրաստանում:

Երկրորդ դեպքում արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտների և վնասների սալոն բազմապատկվում է շահութահարկի դրույքաչափով և դրական լինելու դեպքում՝ գումարվում է շահութահարկի պարտավորությանը՝ ավելացնելով այն, բացասական լինելու դեպքում՝ հանվում է շահութահարկի պարտավորությունից՝ նվազեցնելով այն, ինչպես դա կատարվում է Ղազախստանի և Դոմինիկյան Հանրապետություններում:

3. Հետազոտության շրջանակում ուսումնասիրված երրորդ կարևորագույն խնդիրը վերաբերում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված (կառուցված, մաշված) ոչ ընթացիկ ակտիվների համար կիրառվող մաշվածության մեթոդին:

✓ Հետազոտությունում բացահայտվել է վերոնշյալ մեթոդի խնդրահարուց կողմերը: Ըստ այդմ՝ ներկայացվել է 7 հիմնական խնդիր, որոնք առաջացել են նշված մեթոդի կիրառման արդյունքում: Հեղինակի կողմից հիմնավորվել է «Շահութահարկի մասին» օրենքով նախատեսված 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների համար նախատեսված մաշվածության մեթոդի աննպատակահարմարությունը կիրառության համար, ինչպես նաև հավելվել է, որ

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների համար կիրառվող մաշվածության մեթոդի պատճառով, ի թիվս այլ խնդիրների, տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն չեն ունեցել ճշգրիտ հաշվարկելու շահութահարկը և լրացնելու շահութահարկի հաշվարկը:

4. Կապակցված կողմերին առնչվող խնդիրների շուրջ իրականացված ուսումնասիրությունը ամփոփվել է ներքոնշյալ դրույթներում՝

✓ Կապակցված կողմերին առնչվող հարցերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ ՀՀ Հարկային օրենսգրքի մոտեցումը փոխակապակցվածության որոշման ժամանակ արմատապես տարբերվում է ՀՀՄՍ 24-ի մոտեցումներից: Խոսքը վերաբերում է գործարքների պարբերականության հիման վրա հարկային մարմնի կողմից փոխակապակցվածության որոշմանը, ինչը ՀՀՄՍ 24-ում շեշտված է, որ չի կարող հիմք հանդիսանալ փոխակապակցվածության համար: Ատենախոսի կարծիքով՝ պարզաբանված մոտեցումների տարբերությունը ենթակա է շտկման: ՀՀ Հարկային օրենսգրքում բերված մոտեցումները չպետք է սկզբունքային տարբերվեն ՀՀՄՍ 24-ի պահանջներից. ատենախոսը դա համարում է չհիմնավորված:

✓ Չնայած նրան, որ ՀՀ Հարկային օրենսգրքում ամրագրված է փոխակապակցված կողմերի վերաբերյալ մոտեցումը, այնուամենայնիվ, նշված չէ ոչ մի առանձնահատկություն՝ փոխակապակցված կամ այլ տնտեսվարող սուբյեկտների իրականացրած գործարքների միջև: ՀՀՄՍ 24-ի մոտեցմամբ՝ կապակցվածության հիմքում դրվում է հաշվետու կազմակերպության որոշումների կայացման վրա ազդեցություն ունենալու և վերահսկելու հանգամանքը: Ըստ հեղինակի՝ դրանք կարծես թե դիտարկվում են որպես մեկ տնտեսական սուբյեկտ: Այդ առումով տրամաբանական է, որ կապակցված կողմերի միջև տեղի ունեցող գործարքները չի կարելի դիտարկել նույն տրամաբանությամբ, ինչ այլ սուբյեկտների հետ տեղի ունեցողները: Կապակցված կողմերի միջև կարող են տեղի ունենալ այնպիսի գործարքներ, որոնք տեղի չէին ունենա, եթե փոխակապակցվածությունը առկա չլիներ:

✓ Հարկային վարչարարության հիմքում դրվում է նաև հավասարության սկզբունքը, սակայն, եթե կապակցված կողմերը դիտվում են որպես մեկ ընդհանուր սուբյեկտ, ակնհայտ է դառնում, որ դրանց հանդեպ պետք է կիրառվի ՀՀ Հարկային օրենսգրքում այլընտրանքային մոտեցում: Այնինչ ՀՀ Հարկային օրենսգրքի 71-րդ և 73-րդ գլուխները սահմանում են խիստ կանոններ, համաձայն որի, եթե գործարքը 20 տոկոս և ավելի չափով տարբերվում է սովորաբար կիրառվող գներից, ապա հարկային մարմինը իրավասու է տնտեսվարող սուբյեկտի հարկերը հաշվարկել անուղղակի եղանակով: ՀՀ Հարկային օրենսգրքի 71-րդ գլխի դրույթները չպետք է տարածվեն ՀՀ ռեզիդենտ կապակցված կողմերի վրա:

✓ Ատենախոսի կարծիքով տեղին կլինի ՀՀ Հարկային օրենսգրքում փոփոխություն կատարել՝ կապակցված կողմերի ճանաչման չափանիշները ՀՀՄՍ 24-ի չափանիշներից առկա սկզբունքային տարբերությունը վերացնելու ուղղությամբ և ՀՀ Հարկային օրենսգրքի 71-րդ գլխի պահանջները չտարածել ՀՀ ռեզիդենտ կապակցված կողմերի վրա:

5. Ֆինանսական արդյունքի վերլուծության շրջանակում իրականացված հետազոտությունը ամփոփված է ներքոնշյալ դրույթներում.

✓ Հետազոտության 2.3 ենթահարցում վերլուծության են ենթարկվել հանքարդյունաբերության ոլորտի 11 կազմակերպությունների իրացվելիությունը,

վճարունակությունը՝ դրանք դիտարկելով գործարար ակտիվության հետ համատեղ: Պարզ է դարձել, որ հանքավայրեր շահագործող կազմակերպությունների մոտ առկա է ակտիվների իրացվելիության և վճարունակության խնդիր:

✓ Հեղինակի կողմից առաջարկվել է տիպային հաշվետվության օրինակ՝ որպես դրամական հոսքերի և իրացվելիության կառավարման գործիք, որի միջոցով կազմակերպությունները կարող են մշտադիտարկման առարկա դարձնել իրենց վճարունակությունը, պլանավորել իրենց դրամական միջոցների հոսքերը: Այս քայլը միտված է վճարունակության բարձրացման և դրամական միջոցների արդյունավետ կառավարման հաշվին հասնել ֆինանսական արդյունքի բարելավմանը: Ըստ ատենախոսի՝ առաջարկվող տիպային հաշվետվությունը հնարավորություն կտա կազմակերպություններին լուծելու տեղեկատվական, գնահատողական, որոշումների կայացման և պլանավորման խնդիրներ:

✓ Հեղինակի կարծիքով՝ վերոնշյալ խնդիրների լուծումը կտանի ֆինանսական արդյունքի հաշվառման բարելավման, իսկ առաջարկված մոտեցումներով դրամական հոսքերի կառավարման իրականացումը բացի այն, որ կապահովի դրամական հոսքերի ճիշտ կառավարումը, իր հետևից կբերի նաև կազմակերպության արդյունքների բարելավում և հնարավորություն կտա կազմակերպության ակտիվների իրացվելիության գնահատման գործընթացը իրականացնել անընդհատ՝ դրանով իսկ կանխելով հնարավոր խնդիրների առաջացումը:

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ ատենախոսը կարծում է, որ բարձրացված խնդիրների ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն է ընձեռում կատարելու եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք, կիրառվելով գործնականում, իրենց նպաստը կբերեն ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների կայուն զարգացմանը:

**Արենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հեղկայա աշխատություններում.**

1. Մարտիրոսյան Պ., «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների ազդեցության գնահատականը տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական արդյունքների վրա, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 1-2 (173-174) 2015թ, էջ 66-69:

2. Մարտիրոսյան Պ., Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ֆինանսական և հարկային հաշվառման մոտեցումները, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 9-10 (193-194) 2016թ, էջ 85-87:

3. Մարտիրոսյան Պ., Ֆինանսական արդյունքի ձևավորման մոտեցումները ԵԱՏՄ շրջանակում, «Ալլընտրանք» գիտական հանդես, #4, հոկտեմբեր-դեկտեմբեր 2016թ. էջ 451-459:

4. Մարտիրոսյան Պ., Կազմակերպության հաշվեկշռի իրացվելիության և վճարունակության վերլուծության առաջարկվող մոտեցում, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 11-12 (195-196) 2016թ, էջ 74-77:

5. Մարտիրոսյան Պ., Կապակցված կողմերին առնչվող հիմնադրույթների մեկնաբանման տեսամեթոդական խնդիրները, «Ալլընտրանք» գիտական հանդես, #1, հունվար-մարտ 2017թ. էջ 230-236:

6.Մարտիրոսյան Պ., Ակտիվների իրացվելիության և վճարունակության սահմանային միջակայքերի որոշման մոտեցում, Այլընտրանք» գիտական հանդես, #3, հուլիս- սեպտեմբեր 2017թ. էջ 149-157:

**Пути совершенствования учета и анализа финансового результата в организациях реального сектора экономики РА**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 “Финансы, бухгалтерский учет”

Защита диссертации состоится 21-го декабря 2017г. в ..... часов, на заседании специализированного совета ВАК 014 “Экономика”, в Армянском государственном экономическом университете, по адресу: РА, г. Ереван, Налбандяна 128

**РЕЗЮМЕ**

При настоящих условиях преобладания частной собственности, чрезвычайную важность приобретает финансовый результат организаций реального сектора экономики. В условиях рыночной экономики успешно работает та организация, которая способна максимально эффективно использовать находящиеся в ее распоряжении ресурсы и создать дополнительный результат.

Финансовым результатом организаций заинтересованы все: собственники, государство, сотрудники организации, общество. Очевидно, что финансовый результат крайне важен для всех участников рынка, а возможное усовершенствование как следствие формирования и анализа этого результата становится актуальной проблемой.

За последние десятилетия Республика Армения прошла сложный путь для того, чтобы достичь соответствия современным условиям хозяйствования. На этом пути осуществлены и продолжают осуществляться реформы, которые направлены на создание максимально объективного поля для хозяйствующих субъектов. Однако, ясно также, что ряд проблем пока еще ждет своего решения.

С 2015 г. Республика Армения присоединилась к Евразийскому экономическому союзу. Это подразумевает, что уже произведенные и будущие изменения необходимо рассматривать также в этом контексте.

Необходимо, чтобы созданный организациями результат строго учитывался, что возможно за счет максимально объективных подходов к формированию этого результата. А разработка новых подходов более полного и комплексного анализа является одним из необходимых шагов, направленных на стабильное развитие организаций реального сектора экономики.

Цель и задачи исследования: Целью диссертации является выявление проблем учета и анализа финансового результата, предложение способов усовершенствования, рассмотрение вопроса целесообразности их внедрения в экономику РА, путем изучения, сопоставления теоретических, законодательно-правовых материалов, сравнения с зарубежным опытом и его анализом.

Для осуществления данной цели поставлены следующие задачи:

- Изучить зарубежный и отечественный опыт учета финансового результата и установить законодательно-правовые основы его учета, сравнить подходы и налоговые механизмы учета финансового результата в РА.
- Установить теоретические и методологические основы анализа финансового результата и определить роль ликвидности активов и платежеспособности для этого анализа.
- Проанализировать взаимосвязь финансового результата и налога на прибыль организаций реального сектора экономики РА в качестве одного из элементов формирования этого результата, обосновать воздействие метода износа основных средств и изменений валютных курсов на формирование финансового результата.
- На примере ведущих организаций горной промышленности РА выявить пути укрепления платежеспособности и повышения ликвидности активов организаций в контексте анализа финансового учета.
- Установить пути усовершенствования учета финансового результата в рамках законодательства Евразийского экономического союза и законодательства РА.
- С точки зрения налогового учета обосновать вредное воздействие метода износа, применяемого к налогу на прибыль, как к элементу, формирующего финансовый результат.
- Разработать и представить новую форму отчета об управлении денежными потоками и платежеспособностью, благодаря которой будет возможно улучшить финансовый результат.

Полученный в ходе исследования научный результат может быть применен в реальном секторе экономики, таким образом сделав еще один маленький шаг на пути реформ.

Научная новизна исследования:

- Выделен ряд факторов, искажающих учет финансового результата, и предложены пути устранения их воздействия. В частности, предложено изменить действующие в настоящее время подходы, относящиеся к включению изменений курса иностранной валюты в налогооблагаемую прибыль, пулинговому методу износа и к взаимосвязанным сторонам, четко определив переходные положения.
- Разработан подход определения предельных интервалов платежеспособности и ликвидности активов организации, оценивая их во взаимосвязи с финансовым результатом.
- Разработана и предложена форма отчета «Об управлении денежными потоками и платежеспособностью», цель которой - улучшение финансового результата путем усиления эффективности управления денежными потоками. Рассмотрены сценарные решения на основании результатов отчета.

## **Petros Lernik Martirosyan**

### **Ways of improvement of accounting and analysis of the financial result in the organizations of the real sector of economy RA.**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 “Finance, accounting”

The defense of the thesis will take place on the 21-st December, at ....o'clock, at the meeting of the Special Council on Economics 014 of the Supreme Qualification Board, in the Armenian State University of Economics, at 128 Nalbandyan str., Yerevan city, RA.

#### **Abstract**

Under the present conditions of economic management when private ownership prevails the financial result of the organizations of the real sector of economy assumes special prominence. At the market economy those organizations provide result which are able to use their resources most effectively and earn additional result from them.

Everybody, the owners, state, employees of organizations, society, are interested in the financial result of organizations. It is evident that the financial result is of utmost importance for all participants of the market and the possible improvement due to formation and analysis of that result turns into an urgent problem.

During the last decades the Republic of Armenia has passed a difficult way to correspond to the present conditions of business management. A series of reforms have been implemented and are implementing on that way directed to the establishment of the most objective field of the subjects of economy. However, it is also clear that several tasks are still waiting for their solutions.

From 2015 the Republic of Armenia has joined the Eurasian Economic Union which supposes that the changes in course or those to be carried out shall be considered within that context.

It is necessary that the result created by organizations be accounted precisely which is possible at the expense of the most objective approaches to the formation of that result. Besides, the development of new approaches to the full and complex analysis of the financial result will constitute one of the necessary steps oriented to the stable development of the organizations of the real sector of economy of RA.

The goal of the dissertation is the recognition of issues related with registration of financial results and analysis through the study and comparison of theoretical, legal and regulatory materials, their association with the best foreign practice and analysis, propose improvement methods and consider the reliability of their implementation in the RA economy.

The following issues are put for implementation of this goal:

- To review the foreign and local practice of registration of financial results and to explain the legal and regulatory grounds of registration of financial results, to compare approaches of registration of financial results in RA and taxation mechanisms.
- To explain the theoretical and methodological grounds of analysis of the financial results and present the role of liquidity and solvency of the assets in such analysis.
- To analyze the relation of one of the components of the financial result and the tax of profit of the organizations of the real sector of RA economy, to justify the influence of method of depreciation of fixed assets and effect of foreign exchange changes on the formation of financial results.
- To identify the ways of improvement of solvency of organizations and liquidity of assets in the context of analyzing financial results on the example of leading organizations in the field of mining in RA.
- To identify the ways of improvement of registration of financial results in the scope of Eurasian economic union and RA legislation, each separately.
- To justify the distorting influence of depreciation method applied from the tax registration point on the tax on profit as on the component of formation of financial result.
- To develop and present report on the management of cash flows and solvency in a new way, which will help improving the financial results.

The scientific result obtained during the research may be used in the real sector of economy and that allows to make a small step on the way of reforms. The scientific novelty suggested in the research is as follows:

- A number of factors that distort the accounting of the financial result are identified and ways of eliminating their impact are suggested. In particular, it is proposed to change the currently existing approaches related to the inclusion of changes of the foreign currency exchange rate in taxable income, pooling method of depreciation and interrelated parties, at that clearly defining the transitional provisions.
- An approach for determining the limit intervals of solvency and liquidity of organizations' assets is developed assessing them in conjunction with financial result.
- A «Management of Cash Flows and Solvency» report form was developed and proposed whose aim is to improve the financial result by enhancing the efficiency of management of cash flows. Solutions on scenarios following from the results of the report are considered.